

Ուղևորություն Հայաստան (23-27 մայիս 2016)

**Լուսաձորի ֆերմայի և պանրագործարանի ընդլայնման բազմա-
արարողություն**

Պրեսս կոնֆերանս

Երեքշաբթի 24 մայիս 2016

Պատրիկ Դեվեջյանի ելույթ

Օ-դը-Սեն դեպարտամենտի խորհրդի նախագահ

Պարոն Տարածքային կառավարման նախարար
Պարոն Տարածքային կառավարման փոխնախարար
Պարոն Գյուղատնտեսության նախարար
Պարոն Հայաստանում Ֆրանսիայի դեսպան
Պարոն Ֆրանսիայում Հայաստանի դեսպան
Պարոն մարզպետ
Պարոնայք Ֆրանսիայի և Հայաստանի պատգամավորներ
Տիկնայք և պարոնայք

Կուզենայի նախ ասել, թե ինչ երջանիկ եմ վերադառնալ այստեղ՝ Տավուշ:

Եվ իմ բավարարվածությունը ավելին է քան երբևէ, հաշվի առնելով ինչքան է ամեն ինչ բարելավվել իմ նախորդ՝ 2010 թվականի այցելությունից հետո:

Այստեղ ընթացող և գյուղատնտեսական, և առևտրային զարգացումները շատ քաջակերող են:

Այս տարածաշրջանը կարող է և պետք է զարգանա: Այն կշարունակի իր վերելքը և կհասնի ինքնուրույնության, իր սեփական առավելությունների շնորհիվ:

Տարածաշրջանում մեր իրականացված ծրագրերի նպատակը հենց հանդիսանում է դա:

Երբ աշխարհում խոցելի բնակչությամբ տարածաշրջանները տառապում են, Ֆրանսիայի տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող անտարբեր մնան:

Համերաշխությունը պետք է արտահայտվի միջազգայնորեն: Սակայն սխալ կլիներ աջակցությունը արտահայտել ուղղակիորեն դրամական չեկ ստորագրելով, կամ անկանոն կերպով փոշիացնելով հանրային միջոցները:

Ես կամենում էի այս ոլորտում իրականացնել սահմանափակ երկրներում թիրախավորված ծրագրեր՝ բնակչության համար շոշափելի արդյունքների հասնելու համար:

Մեր ջանքերը կենտրոնացվել են սննդային անվտանգության և ընտանեկան գյուղատնտեսության զարգացման վրա աշխարհի տարբեր սոցիալապես խոցելի տարածաշրջաններում:

Ինչու? Որովհետև ընտանեկան գյուղատնտեսությունը սնում է աշխարհի բնակչության 70 տոկոսը և թերսնման ու սննդային անվտանգության հարցերի լավագույն պատասխանն է: Պարադոքս է կարծես, սակայն թերսնմամբ տառապող բնակչության մեծ մասը զբաղված են գյուղատնտեսությամբ և հաճախ ապրում են գյուղական վայրերում: Նպատակն է զարգացնել տեղական գյուղմթերքի արտադրությունները և հասցնել մինչև սպառողը:

2009 թվականից մեր դեպարտամենտը Տավուշի մարզում գյուղտնտեսական զարգացման ծրագրում ներդրել է 4,2 մլդ եվրո:

Ես շնորհակալություն եմ հայտնում Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամին, որն իրականացնում է այս ծրագիրը՝ հիմնվելով «Հիմնատավուշ» հիմնադրամի տեղական թիմի վրա:

Ես շնորհակալություն եմ հայտնում նաև Տավուշի մարզին, որի հետ մենք համագործակցում ենք 2010 թվականից:

Ինչու? Տավուշի մարզը: Որովհետև այն Հայաստանում ամենաաղքատներից է, մեկուսացված դիրքով՝ Ադրբեջանի և Վրաստանի սահմանին, սակայն Հայաստանի համար կարևորագույն նշանակություն և ներուժ ունի:

Տավուշի աշխարհագրական դիրքը, կլիման, ռելիեֆը, արտավայրերի քանակը, բարենպաստ պայմաններ են ստեղծում բանջարաբուստանային կուլտուրաների մշակման և կաթնամթերքի արտադրության համար:

Նպատակը, որ դրեցինք մեր առաջ, դա գյուղատնտեսական և կաթնամթերքի արտադրության վերականգնում էր՝ նպաստելով հատկապես երիտասարդների արտագաղթի նվազմանը: Պետք էր ստեղծել այստեղ կայուն և ինքնուրույն զարգացման պայմաններ:

Դրա համար պետք էր միաժամանակ աշխատել հետևյալ ուղղություններով:

- Գյուղատնտեսության զարգացման,
- Կաթնարդյունաբերության զարգացում,
- Շահառու գյուղացիների մասնագիտական վերապատրաստում

7 տարվա աջակցության շնորհիվ արդյունքները դրական են:

Գյուղմթերքի արտադրությունը զարգանում է (եզիպտացորեն, ցորեն, խաղող, բանջարաբոստանային կուլտուրաներ,...), շնորհիվ ոռոգման ջրանցքների (25 կմ սարքվել կան վերանորոգվել են), բայց նաև շնորհիվ մատակարարված սերմացուի, սածիլների, գյուղտեխնիկայի, գյուղերում սերմերի և տնկիների բաժանման, որոնք թույլ են տալիս միևնույն ժամանակ տարբերակել արտադրությունը, մեծացնել գյուղացիների՝ կաթնամթերքի արտադրությունից ստացվող եկամուտները և մատակարարել անասնակեր:

Խոշոր եղջերավորների հոտը նորացվում է. կովկասյան ցեղատեսակը ցածր արտադրողականության է, բարձր կաթնատվությամբ Միմենտալ և Ջերսի ցեղատեսակի կովերի են ներմուծվել Եվրոպայից: Նրանք օրական տալիս են 700-900 լիտր կաթ:

Արդյունավետ և անասնաբույծների համար շահավետ կաթնամթերքի արտադրության արտադրամաս է ստեղծվել:

«Լուսաձորի» ֆերման, որը կառուցվել է 2012 թվականին, կարող է տարածաշրջանի համար դառնալ օրինակելի: Այնտեղ կարող են բուծվել մինչև 200 անասուն:

7 միկրո-ֆերմաներ ստանում են «Լուսաձորում» բուծված հորթերին: Այդ ֆերմաները կառավարվում են գյուղացիների կողմից ստեղծված կոոպերատիվների միջոցով:

Ժամանակակից պանրագործարան է հիմնվել՝ ընդլայնված պահեստային և հնեցման սրահներով: Օրական 80կգ պանիր է այժմ արտադրվում:

Ֆերմայում կա Տավուշի արտադրանքի վաճառքի կետ, ինչը հնարավորություն է ստեղծում այն ներգրավել տուրիստական երթուղիներում:

Եվ վերջապես, հողագործների և անասնաբույծների վերապատրաստման համար ստեղծվել է կրթական կենտրոն, որտեղ դասավանդվում են անասնաբուծության նորագույն մեթոդները:

Վերջին տարիներին ֆերմային կառավարումը բարելավվել է հատկապես Ֆրանսիայից ժամանած մասնագետների(անասնաբույծ, պանրագործ) շնորհիվ, որոնց ես հավաստում եմ իմ երախտագիտությունը:

Այս ծրագրում ընդհանուր առմամբ 20 գյուղ է ընդգրկվել:

Որո՞նք են այս տարվա նպատակները՝

- պետք է նախ և առաջ դարձնել շահութաբեր արդեն ստեղծված կաթնարտադրության արտադրամասը

- պետք է ընդգրկել ավելի շատ շահառուներ, ավելի շատ գյուղերից և ընդունել ավելի շատ կաթ

- պետք է անասունների սնման ծախսերը կրճատել՝ ամառային սեզոնին արոտավայրեր տանելով նրանց

- պետք է մեծացնել ֆերմայի արտադրանքի սպառման շուկաները, ոչ միայն Հայաստանում, այլ նաև արտասահմանում, հատկապես Ռուսաստանում

Պետք է ուղղորդել շահառուներին, պատրաստելով նրանց ինքնուրույնության, բնականաբար ուսուցանելով նրանց և բարձրացնելով կոոպերատիվի կառավարման և անասնապահության վերաբերյալ նրանց կարողությունները և հմտությունները:

Ապրել սեփական հողի վրա, սեփական աշխատանքով ահա այն պատվաբեր շրջանակը, որը ես ուզում եմ քաջալերել:

Այս մեթոդով է հնարավոր արդյունավետ կառավարել բնական ռեսուրսները, պայքարել աղքատության և թերսնման դեմ, սահմանափակել արտագաղթը և զարգացնել տեղական տնտեսությունը:

Ծրագիրը, որը մենք իրականացնում ենք, Տավուշի բնակիչների համար լավ հնարավորություն է:

Լավ ապրել, նշանակում է լինել ամուր ցանկացած մարտահրավերների հանդիման: Դա շատ կարևոր է, երբ շարունակվում է ազատության համար պայքարը:

Շնորհակալություն